

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2022թ.-ի ճարտարապետական հոսքի ընդունելության քննական տոմսի նմուշ

1. /1.5 միավոր/ Գտնել արտահայտության արժեքը.

$$\frac{\sqrt{2}+1}{\sqrt{2}-1} + \frac{\sqrt{2}-1}{\sqrt{2}+1} :$$

2. /2 միավոր/ $ax^2 - 3x - 5 = 0$ հավասարման արմատներից մեկը հավասար է 1-ի: Գտնել a -ն:

3. /2 միավոր/ Երկրաչափական պրոգրեսիայում $b_2 = 6$, $b_4 = 54$, ընդ որում՝ $q < 0$: Գտնել b_6 -ը:

4. /3 միավոր/ Լուծել անհավասարումը.

$$\frac{(x+3)^2(3x+1)}{(x-2)^2} \geq 0 :$$

5. /3 միավոր/ Լուծել հավասարումների համակարգը.

$$\begin{cases} x^2 + xy = 2 \\ y - 3x = 7 \end{cases} :$$

6. /2.5 միավոր/ Լուծել հավասարումը.

$$|2x - 1| = 3x + 6 :$$

7. /3 միավոր/ 100մ հեռավորության վրա սայլի առջևի անիվը 10 պտույտ ավելի կատարեց ետևի անիվից: Գտնել առջևի անիվի շրջանագծի երկարությունը, եթե հայտնի է, որ այն 0.5մ-ով պակաս է ետևի անիվի շրջանագծի երկարությունից:

8. /3 միավոր/ Հավասարասրուն եռանկյան սրունքը 7 է: Հիմքի որևէ կետից տարված են սրունքներին զուգահեռ ուղիղներ: Գտնել ստացված զուգահեռագծի պարագիծը:

* Ցանկացած վարժության կամ խնդրի լուծում անհրաժեշտ է ներկայացնել քայլ առ քայլ: